

Հ. Ն. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Ժամանակակից հայերենում դեմքի քերականական իմաստի մի առանձին դրսևորումը կապվում է ցուցական դերանունների հետ: Իմաստային հակադրությամբ և ձևային տարբերությամբ դիմային հարաբերություն են արտահայտում եռաշարք ցուցականները՝ սա, դա, նա,— այս, այդ, այն,— այսպիսի, այդպիսի, այնպիսի,— այսպես, այդպես, այնպես,— այստեղ, այդտեղ, այնտեղ,— այսչափ, այդչափ, այնչափ,— այսքան, այդքան, այնքան: Մյուսները (նույն, միևնույն, նույնպիսի, նույնպես, նույնչափ, նույնքան, մյուս) չեզոք են դեմքի նկատմամբ:

Հայերենի եռաշարք ցուցականների իմաստային այս յուրահատկության մասին նշել է դեռ VIII դ. քերական Ստ. Սյունեցին. «Դերանուն... են բառքն այսոքիկ. ես, դու, սա, դա, նա եւ յոգնականք են այս. մեք, դուք, սոքա, դոքա, նոքա... եւ այս, այդ, այն եւ այսք, այդք, այնք եւ ամենայնք այսպիսիք, որք զդէմս ուրումն յայտնեն յասելն... եւ լինին սոքա ըստ... երից դիմաց»<sup>1</sup>: Վարդան Արևելցիի (XIII դ.) միանգամայն ճիշտ է մեկնաբանում այդ դերանունների իմաստային հակադրությունը՝ «գեղեցկաբանութիւն» համարելով ամեն մի դեմքի համար առանձին ցուցական ունենալը. «Բայց ասեն թէ կայ առ մեզ ևս գեղեցկաբանութիւն... սոցա, դոցա, նոցա. որք առ իս կան, սոցա ասեմ, և զոր առ քեզ՝ դոցա, և որ յիսնէ և քենէ հեռի են՝ նոցա ասեմ»<sup>2</sup>:

Ժամանակակից հայերենի եռաշարք ցուցականներով արտահայտվող դիմային հարաբերությունների վերաբերյալ արժեքավոր դիտողություններ ունի պրոֆ. Ս. Աբրահամյանը<sup>3</sup>: Սակայն հեղինակն առանձին նպատակ չի հետապնդել բնութագրելու դեմքի իմաստն ու նրա արտահայտությունը դերանուններում, ուստի մնում է քննելի, թե ի՞նչ է արտահայտում դեմքի իմաստը ցուցական դերանուններում, ի՞նչ բնույթ ունի և նրանց ո՞ր կիրառություններում է դրսևորվում:

Արտաքին աշխարհի առարկաները, երևույթները, գործողությունները, հատկանիշներն ընկալելով՝ մեր գիտակցության մեջ դրանք կապում ենք թվի, ժամանակի, տարածության, նմանության, տարբերության և այլ հարաբերությունների գաղափարների հետ՝ այդ բոլորն արտահայտելով լեզվի միջոցով:

Առարկաների, նրանց հատկանիշների և այլնի տարածական ֆարաբերությունների ըմբռնումը կարող է դրսևորվել լեզվական տարբեր միջոցներով:

<sup>1</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 215.

<sup>2</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5—15-րդ դդ.), Երևան, 1954, էջ 258: Դերանվանական այս ձևերը (յիսնէ, քենէ) պետք է լինեն՝ յիսնէ և ի քէն:

<sup>3</sup> Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 110—126:

Հայերենում իբրև այդպիսի միջոց են ծառայում նաև ցուցական դերանունները: Նրանցով արտահայտվում է առարկայի, հատկանիշի, գործողության տեղի, շափի, ձևի ընդհանուր գաղափար՝ տարածական (կամ ժամանակային) հարաբերություններ<sup>4</sup>:

Իսկ ի՞նչ է արտահայտում դեմքի քերականական իմաստը նրանցում: Եթե անձնական-գիմային դերանուններում այն ցույց է տալիս անձերի հաղորդակցական դերը, նրանց մասնավորումն ըստ հաղորդակցմանը մասնակցելու || շմասնակցելու և խոսքի հեղինակ լինելու հատկանիշների, ապա եռաշարժ ցուցականներում դեմքի իմաստով արտահայտվում է առարկայի, հատկանիշի, գործողության տեղի, շափի, ձևի տարածական հարաբերության մասնավորումը հաղորդակցողների նկատմամբ, որով տարբերակվում են այդ առարկան, հատկանիշը և այլն, և դրանով հեշտացվում է նրանց նկատմամբ հաղորդակցի կողմնորոշումն ու ընկալումը: Եթե ես դերանվամբ նշվում է խոսքի հեղինակը, ապա համապատասխան առարկայանիշ սա կամ այս ցուցականով (վերջինս ինքնուրույն՝ գործածության դեպքում) մատնանշվում է հաղորդակցման պրոցեսում գիմային երրորդ դեր ունեցող մի առարկա, որը գտնվում է խոսողի տարածական ոլորտում: Նույնը պետք է ասել նաև դա (այդ) և նա (այն) ցուցականների վերաբերյալ՝ դու-ի և նա, ինքը անձնականների հարաբերությամբ: Դա կամ այդ դերանունն ունի երկրորդ դեմքի իմաստ, բայց նրանով նշվում է ոչ թե հաղորդակից անձը, այլ վերջինիս մոտ գտնվող, նրա հետ տարածական անմիջական առնչություն ունեցող առարկան, որն ըստ հաղորդակցմանը մասնակցելու || շմասնակցելու և խոսքի հեղինակ լինելու հատկանիշների, պարզ է, ունի գիմային երրորդ դեր: Իսկ նա կամ այն ցուցականով մատնանշվում է գիմային երրորդ դերի մի առարկա, որ գտնվում է հաղորդակցողներից հեռու, նրանց տարածական ոլորտներից դուրս:

Ինչպես անձնական-գիմային դերանուններում, այնպես էլ եռաշարք ցուցականներում դեմքի իմաստն ունի բառական-բերականական բնույթ, այն առումով, որ դրսևորվում է առանձին բառերի ինքնուրույնությամբ և ոչ թե նրանց քերականական հատուկ ձևակազմությամբ կամ շարահյուսական զուգորդությամբ: Ցուցական դերանունները մի բառի սահմաններում արտահայտում են և՛ առարկայի, հատկանիշի, գործողության տեղի, ձևի, շափի, և՛ նրանց՝ հաղորդակցողների նկատմամբ տարածական հարաբերության մասնավորման իմաստ: Եթե ասում ենք՝ «Սա իմ նվերն է, դա՝ քո», ապա սա և դա դերանուններով միասնաբար մտածվում են և՛ առարկան, և՛ նրա տարածական-գիմային դիրքը:

Դեմքի իմաստը ցուցական՝ դերանուններում բառական-քերականական բնույթ ունի նաև այն առումով, որ նրանցից յուրաքանչյուրին հատուկ է դեմքի կոնկրետ կարգային իմաստներից մեկը, այդ պատճառով էլ նույն գերանունը տարբեր գիմային իմաստներով չի կարող հանդես գալ՝ կազմելով գիմային հարացույց: Եվ դեմքի բովանդակությունն այս դերանուններում ամբողջանում է ոչ թե մի բառույթի սահմաններում՝ համապատասխան բառա-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 111, 124:

<sup>5</sup> Իհարկե, ունի նաև կիրառական այն տարբերությունը, որ նրանով կարող են նշվել և՛ անձ, և՛, գերադանցապես, իր, եղելություն, իրողություն, ամբողջական նկարագրություններ:



ձևերի հարացույցով (ինչպես բայական դեմքը), այլ բառական միավորների շարքի միջոցով:

Դերանվանական դեմքի կարգային անդամները եռաշարք ցուցականներում կարելի է ներկայացնել այսպես.

Առաջին տարածական-դիմային դիրքի իմաստ են դրսևորում ս արմատահնչյունն ունեցող ցուցականները՝ սա, այս, այսպիսի, այսպես, այստեղ, այսչափ, այսքան: Նրանցով արտահայտվող առարկան, հատկանիշը, գործողության տեղը, ձևը, չափը մատնանշվում, ակնարկվում են խոսողին մոտ, նրա տարածական ոլորտում (կամ մտածվում են իբրև այդպիսին). օրինակ՝ «Ավա՛ղ, սինյորա, ներքեք ինձ, որ ես շսեցի ձեզ և թեպետ այլևս չեկա ձեզ մոտ, բայց շմոռացա ձեզ, այլպես ձեր այս նամակն այսպես խնամքով չէի պահի ինձ մոտ: Սա մի անգնահատելի գանձ է, որ դուք պարզեցիք ինձ, և այս գանձն աչքի լույսի պես կպահեմ մինչև մահս, որովհետև եթե ձեր այս նամակը չլիներ, ես թերևս այն չլինեի»: ինչ որ եմ այժմ» (Ն-ԴԾԺ, հ. 1, էջ 150): «Բայց այստեղ, ներսս, այնպիսի բան կա, որ անց է ցույցից: Իսկ սրանք վշտի պաճուճանքն են լոկ և արդուզարդը» (ՇԸԵ, հ. 1, էջ 18) և այլն:

Երկրորդ տարածական-դիմային դիրքի իմաստն արտահայտվում է դ արմատահնչյունն ունեցող դա, այդ, այդպիսի, այդպես, այդտեղ, այդչափ, այդքան ցուցականներով: Նրանցով մատնանշվում, ակնարկվում են խոսակից կողմին մոտ, նրա տարածական ոլորտում գտնվող առարկան, հատկանիշը և այլն, օրինակ՝ «Սիրելի՛ չամլետ, դե՛ն ձգիր քեզնից այդ մռայլ գույնը, Եվ թող քո աչքը բարեկամի պես նայի դանիացուն» (ՇԸԵ, հ. 1, էջ 17): «Հերիք ձեռքերդ այդպես գալարես...» (ն. տ., էջ 107): «...Վասյան, խլելով կապոցները, սկսեց արագ-արագ բաց անել .— Այո՛ւշա, այս քոնն է, այս իմն է, այս էլ քոնն է, վերցրո՛ւ... չէ, չէ, այդ մեկն իմն է» (ՇԾԺ, հ. 3, էջ 369) և այլն:

Երրորդ տարածական-դիմային դիրքի իմաստ են արտահայտում իրենց բաղադրություններում և արմատահնչյունն ունեցող նա, այն, այնպիսի, այնպես, այնտեղ, այնչափ, այնքան ցուցականները: Նրանցով մատնանշվում, ակնարկվում են հաղորդակցողներից հեռու գտնվող առարկան, հատկանիշը և այլն. օրինակ՝ «Տեսնո՞ւմ եք այն մթին բուրգերն իրենց սուր ու եռանկյունի գագաթներով... Արդյոք այնտեղի՞ց պիտի գա մեր բարոյական փրկությունը, թե՞ մեր լույսը պիտի ծագե մեր մթուփյունից ու խավարից...» (ն. տ., էջ 419) և այլն:

Հաղորդակցող կողմերի տարածական ոլորտների ըմբռնումը հարաբերական, առաձգական բնույթ ունի: Եվ նայած խոսքային իրադրության, հաղորդակցման հանգամանքներին, պայմաններին, տարածական-դիմային դիրքերի հակադրությունը ցուցական դերանուններով խոսքի մեջ արտահայտվում է ավելի կամ պակաս որոշակիությամբ:

Հաճախ, երբ հաղորդակցման պրոցեսում խոսողը չի հանդիպողում իր և խոսակցի տարածական ոլորտները, երբ առարկան, հատկանիշը և այլն մտածվում են թե՛ խոսողի, թե՛ խոսակցի նկատմամբ նույն տարածական հարաբերությամբ, սովորաբար գործածվում են առաջին դեմքի ցուցականները: օրինակ՝ «Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր Կախվել մեր գլխին այսպես կուրորեն: Ինչո՞ւ են փուում այսքան ցավ, ավեր, Հողմերը այս շար ե՞րբ պիտի լռեն: Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—կյանքը դարձնում նզովյա՛լ գեհենն (ԾԶԺԺ, հ. 2, էջ 17): «Եվ երբ ընթերցումից հետո բարձր հոգով, խա-

ղազած կրթերով գաս ինձ տեսութեան իմ հպարտ մենութեան մեջ և շնորհակալութեամբ ձեռքս սեղմես, ապա գոհ կգնամ այս աշխարհից...» (ՎՓՀԻՏ, էջ 37) և այլն:

Սուշաբը ցուցականներով արտահայտվող տարածական-դիմալին դիրքի իմաստը կոնկրետություն ստանում է կիրառական հանգամանքներում: Նրանց առարկայական կամ հատկանշային կոնկրետ վերաբերությունն արտահայտվում է կամ խոսքային իրադրություն, կամ խոսքային շրջանի միջոցով: Առաջին դեպքում ցուցական դերանուններով ուղղակիորեն մատնանշվում, ակնարկվում է խոսքային տվյալ իրադրության մեջ առկա առարկան կամ նրա հատկանիշը, գործողության տեղը, ձևը, շափը, այսինքն՝ դերանունն անմիջնորդաբար հարաբերում է, կապվում իր դեմոտատի հետ. օրինակ՝ «նայի՛ր դու այստեղ, նախ այս պատկերին և ապա սրան... Տե՛ս, ի՛նչ շնորհք կա այս դեմքի վրա: Այս էր ամուսինդ: Իսկ այժմ նայի՛ր, այս մյուսին նայի՛ր... Եվ ի՛նչ դատողություն կարող է անցնել սրանից սրան» (ՇԸԵ, հ. 1, էջ 108) և այլն:

Իրադրական բովանդակություն ունենալիս ցուցականների գործածությունը ուղեկցում է առարկան, հատկանիշը և այլն արտալեզվական օժանդակ միջոցներով (հայացքով, ձեռքով) ցույց տալու գործողությունը: Նրանք բուն ցուցական դեռ ունեն հենց այսպիսի կիրառություններում: Եվ կարելի է ենթադրել, որ ցուցականների նախնական գործածությունն հենց այս է եղել: Հետագայում են ընդլայնվել նրանց կիրառական-իմաստային շրջանակները՝ կապված հատկապես գրավոր խոսքի զարգացման հետ:

Երբ ցուցական դերանունները կոնկրետություն են ստանում խոսքային շրջանի միջոցով՝ փոխարինության գործառությունամբ, նրանց բովանդակությունը որևէ բառով, բառակապակցությամբ կամ ամբողջական նկարագրությամբ արտահայտված է լինում խոսքային շրջանի նրանց նախորդող կամ հաջորդող հատվածում: Նրանցով այս դեպքում ակնարկվում է խոսքային շրջանում արդեն նշվածը կամ նրա շարունակության մեջ նշվողը<sup>6</sup>. օրինակ՝ «Սասունցի Դավիթն ուներ մի քեռի, Անունը Քորոս, ահեղ, ասղահա: Սա էլ իմացավ համբավը կրովի, Մի բարդի ուսին գալիս է ահա» (ՀՔԸԵ, էջ 160), «էսպես է ասել հընուց էդ մասին Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին. Ի՛նչը կհհայթի կյանքում հերոսին, Թե չլինին կինն ու գինին» (Ն. տ., էջ 61) և այլն:

Եթե բաղդատենք այս և քիչ վերը բերված օրինակներում ցուցական դերանունները, ապա որոշակիորեն նկատելի կլինի, որ նրանք տարածական-դիմալին դիրքի հակադրություն ցուցաբերում են ընդհանրապես ոչ թե բոլոր կիրառություններում, այլ, ըստ էության, այն դեպքում, երբ ունենում են իրադրական լայնվանդակություն, երբ նրանց դեմոտատը գտնվում է խոսքային իրադրության մեջ: Այս հանգամանքը կամենում ենք ընդգծել, որովհետև երբ լծորդվող դերանունները (սա, դա, նա, — այս, այդ, այն և այլն) տարածական-դիմալին դիրքի իմաստի տարբերություն որոշակիորեն դրսևորում են հենց այդպիսի բովանդակություն ունենալիս: Բանն այն է, երբ առարկան, հատկանիշը, գործողության տեղը, շափը, ձևը մատնանշելով ասվում է՝ Սա ո՞ւմ կիսանդրին է, Այն ծաղիկը ինչպե՞ս է կոչվում, Նստիր այդտեղ, այստեղ տեղ չկա և այլն,

<sup>6</sup> Կան լեզուներ, որոնք տարբեր ցուցականներ ունեն առարկան, հատկանիշը և այլն ըստ խոսքային իրադրության և ըստ խոսքային շրջանի նշելու համար (տե՛ս շր. Աճ առ յան, կիսկատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 2, Երևան, 1954, էջ 164):



ապա ցուցական դերանվան բովանդակությունը հաղորդակցողների գիտակցություն մեջ հանդես է դալիս կոնկրետ զգայական ընկալմամբ, պատկերացմամբ, որը զուգակցվում է այն տարածական ըմբռնման հետ, որն ունի տվյալ առարկան, հատկանիշը կամ գործողության տեղը և այլն, խոսքային իրադրության մեջ՝ հաղորդակցողների նկատմամբ: Իսկ երբ ցուցական դերանունների կիրառական բովանդակությունն արտահայտվում է խոսքային շղթայի նախորդող կամ հաջորդող օղակներում, և նրանք ունենում են փոխարինական նշանակություն, պարզ է, նրանցով մատնանշվում է ոչ թե խոսքային իրադրության մեջ խոսողին կամ խոսակցին մոտիկ կամ նրանցից հեռու գտնվող առարկան, հատկանիշը, գործողության տեղը և այլն, այլ ակնարկվում է հենց խոսքային շղթայում նշված կամ նրա շարունակության մեջ նշվող առարկան, հատկանիշը և այլն: Հետևաբար, այս դեպքում ցուցականները չեն ծառայում առարկաների, հատկանիշի և այլնի տարածական-դիմային դիրքի կողմնորոշմանը, քանի որ նրանցով չի արտահայտվում խոսքային իրադրության մեջ հաղորդակցվող կողմերին մոտիկ կամ նրանցից հեռու լինելու իմաստ: Կիրառական նման հանգամանքներում եռաշարք ցուցականների տարածական-դիմային դիրքի իմաստը չեզոքանում է կամ, եթե արտահայտվում է, ապա դա լինում է այլ հիմունքով: Այսպես, օրինակ, եթե խոսողը ցուցական դերանվամբ նկատի է ունենում խոսակցի՝ խոսքում նախապես նշված առարկան, հատկանիշը, արտահայտված միտքը և այլն, ապա գործածում է երկրորդ շարքի ցուցականները, որոնք այս դեպքում չնայած ունենում են փոխարինական նշանակություն, բայց արտահայտում են դիմային հակադրություն. երկրորդ դեմքի իմաստը նրանցում բավական որոշակի է մտածվում. օրինակ՝ «Պարտավոր ես, ուրեմն կատարի՛ր նախ և առաջ հորդ կտակի գլխավոր կետը. բաժանվի՛ր կնոջիցդ ու երեխաներիցդ...»

— Այդ քո գործը չէ:

— Թող այդպես լինի...» (ՇԾԺ, հ. 3, էջ 49),

«— Համաձայն չե՞ս, որ քանի հայր կապրի, հայոց «այբուբենը» չի մեռնի:

— Այո, — ասացի ես, — բայց ես հակառակին ավելի համաձայն եմ. այն որ՝ քանի հայոց «այբուբենը» կապրի, հայը չի մեռնի...

— Դրան նույնպես համաձայն եմ» (ԻԾ, հ. 3, էջ 54):

Այս օրինակներում ընդգծված դերանունները դիմային իմաստով ներքուստ հակադրվում են առաջին շարքի ցուցականներին, բայց այդ հակադրությունն այս դեպքում հենվում է ըստ էության ոչ թե տարածական հարաբերության, այլ այն տարբերության վրա, թե դերանվան դենոտատը խոսողի՝ խոսքային շղթայում է արտահայտված, թե՞ խոսակցի:

Ցուցական դերանունների՝ այս հիմունքով դիմային հակադրությունը բավական հաճախ է հանդիպում առօրյա խոսքում:

Որոշ կիրառություններում եռաշարք ցուցականները թեև գործածվում են իրադրական բովանդակությամբ, բայց քանի որ կտրված են լինում կոնկրետ, որոշակի իրադրությունից, այդ պատճառով նրանց կիրառական բովանդակությունը մնում է անորոշ, և, հետևաբար, նրանցով արտահայտվող տարածական-դիմային դիրքի իմաստը նույնպես մտածվում է ոչ կոնկրետ. օրինակ՝ «Ի՛նչ-որ ժամանակ, Մեզանից առաջ, մեզ անհայտ մարդիկ նստել-մտածել ու հորինել են զանազան բաներ. Այս մեկը՝ անե՛լ, Այն մեկը՝ չանե՛լ, Այս՝

համարել ճիշտ, Այն՝ մերժել-վանել՝» (ՊՍԾԺ, հ. 2, էջ 207), «Այստեղ՝ ծնունդ, Այնտեղ՝ կնունք...» (ՊՍԱԶ, էջ 106) և այլն:

Իսկ կայուն արտահայտությունների վերածված «հենց այնպես», «այս կամ այն», «այս ու այն», «սրա-նրա», «այստեղ-այնտեղ», «այսպես թե այնպես» և նմանօրինակ կապակցություններում դիմային հարաբերության իմաստը մթազնած է, որովհետև գրանցում ցուցական դերանունները կորցրել են իրենց բառական բուն արժեքը. օրինակ՝ «...բայց թողնում եմ, որ այսպես թե այնպես, այդ բավականին «նուրբ» հարցն ինքն ընթերցողը լուծե» (ԵԶԾԺ, հ. 6, էջ 135) և այլն:

Երբ ցուցական դերանուններն արտահայտում են ժամանակային հարաբերություն<sup>7</sup>, նրանցով դիմային հակադրություն չի մտածվում: Ինչո՞ւ. Որովհետև եթե նրանցով դրսևորող տարածական-դիմային դիրքի հակադրության հիմքում ընկած է լինում խոսողի ու խոսակցի տարածական ոլորտների տարբերության ըմբռնումը, ապա ժամանակային հարաբերության հակադրությունը մտածվում է հաղորդակցման պահի առնչությամբ, իսկ այդ պահի նկատմամբ հաղորդակցողները հավասար վերաբերություն ունեն. նրանց կողմից տվյալ ժամանակահատվածի ըմբռնումը նույնն է լինում, քանի որ խոսքի հաղորդման և այն ընդունելու ժամանակները սովորաբար համընկնում են: Այսպես. հաղորդակցման տվյալ պահին հավասարապես և՛ խոսողը կասի, օրինակ, «այս գիշեր», «այսպիսի տարի» և այլն, և՛ խոսակիցը՝ նկատի ունենալով այն ժամանակահատվածը, որի մեջ մտնում է հաղորդակցման պահը: Ուստի, նմանօրինակ կիրառություններում եռաշարք ցուցականները ծառայում են ոչ թե իբրև առարկայի, հատկանիշի և այլնի տարածական-դիմային դիրքի կողմնորոշման, այլ ժամանակային հարաբերության կոնկրետացման միջոց: Ըստ որում, առաջին շարքի ցուցականներով ուղղակիորեն նշվում է այն ժամանակահատվածը, որի մեջ մտնում է հաղորդակցման պահը (այս շաբաթ, այս ըոպեին և այլն), իսկ մյուսներով, գերազանցապես փոխարինության գործառության մեջ, ակնարկվում է այն ժամանակահատվածը, որի մեջ չի մտնում հաղորդակցման պահը. վերջինիս համեմատությամբ այն ժամանակային հաղորդականության մեջ, անցյալ է կամ ապառնի. օրինակ՝ «Իսկ մի օր այնքան անգուլթ եք եղել, որ առաջարկել եք նրան աղքատանոց մտնել...», «Քույրերս այսօր էլ առանց արտասուքի չեն կարողանում հիշել այդ օրը» (ՇԵԺ, հ. 6, էջ 242) և այլն:

Այսպիսով, եռաշարք ցուցականները տարածական-դիմային դիրքի հարաբերություն են արտահայտում հավասարապես ոչ բոլոր կիրառություններում, այլ այն դեպքում, երբ ունենում են իրադրական բովանդակություն (արտալեզվական դեհոտատ), իսկ երբ նրանց կիրառական բովանդակությունը կոնկրետություն է ստանում խոսքային շղթայի միջոցով՝ փոխարինության գործառության մեջ, նրանցով արտահայտվող առարկայի, հատկանիշի և այլնի տարածական-դիմային դիրքի հակադրությունը չեզոքանում է կամ դրսևորվում այլ հիմունքով: Իսկ ժամանակային հարաբերություն արտահայտելիս նրանցով դիմային հակադրություն չի մտածվում:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԶԾԺ—Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, 6, Երևան, 1963, 1967:

ՀԶԸԵ—Լ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:

7 Տե՛ս Մ. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 119—122:



- Ին—Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 2, 3, Երևան, 1958, 1959.  
 Ե-Դեժ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1968.  
 Շեժ—Ալ. Շիրվանդզադե, Երկերի ժողովածու, հ. 3, 6, Երևան, 1959.  
 ՇԸԵ—Շեքսպիր, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1964.  
 ՊՍԱԶ—Պարույր Սևակ, Անլուրի զանգակատուն, Երևան, 1966.  
 ՊՍԵժ—Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1972.  
 ՎՓՀԻՏ—Վ. Փափաղյան, Համբուն ինչպես տեսա, Երևան, 1968.  
 և. տ.—նույն տեղում:

## ГРАММАТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ЛИЦА И УКАЗАТЕЛЬНЫЕ МЕСТОИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

О. Н. НАЗАРЕТЯН

### Р е з ю м е

В современном армянском языке грамматическое значение лица выражается не только личными, но и трехрядными указательными местоимениями: «սա», «դա», «նա», «այս», «այդ», «այն», «այսպիս», «այդպիս», «այնպիս» и т. д.

В указательных местоимениях грамматическим значением лица дифференцируются пространственные отношения предмета, формы и способы совершения действия по отношению к участникам речевого общения. Как в личных, так и в указательных местоимениях значение лица имеет лексико-грамматический характер, поскольку оно выражается корневыми морфемами, и каждому местоимению свойственно одно из категориальных значений грамматического лица. В трехрядных указательных местоимениях значение грамматического лица выражается в тех функциональных употреблениях в речи, когда они обладают ситуативным содержанием, т. е. имеют экстралингвистический денотат,